ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Վերոգրյալի հիման վրա և նկատի ունենալով, որ հայցը ենթակա է մերժման, իսկ հայցվոր ընկերության կողմից նախապես վճարվել է անհրաժեշտ պետական տուրքի գումարը, Դատարանը գտնում է, որ հայցի մերժմամբ պայմանավորված՝ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածով, Դատարանը.

## Վ Ճ Ռ Ե Ց

<<ԱՐԿԱՏ>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության՝ ՀՀ արդարադատության նախարարության գլխավոր քարտուղարի 09.10.2023թ. ծանուցմամբ պայմանագիրը միակողմանի լուծելու գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասի, մերժել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է հրապարակվելու օրվանից մեկամսյա ժամկետում բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ՝ Տ.ԳՐԻԳՈՐՅԱՆ